ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ԶԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/4

ք. Երևան «14» Մարտի 2018թ.

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը ի դեմս տնօրեն Լ. Մնացականյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Սաշիկ և Սևակ եղբայրներ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Խ.Սիմոնյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **<< Արագածոտնի մարզի Ավան գյուղական համայնքի ֆերմերային տնտեսությունների զարգացման նպատակով գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցի վերակառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են << օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **70 օրացուցային օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օրացուցային օր:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ

սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **7,370,000 (յոթ միլիոն երեք հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ,** առանց ԱԱՀ: **ՀՀ պետական եկամուտների նախարարության 2000թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 02/1054 հրամանով հաստատված հրահանգով սույն Ծրագիրն ազատված է ԱԱՀ-ից, վերջինիս հարկազատման նպատակով տրամադրվում է համապատասխան տեղեկանք:**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ	<<Սաշիկ և Սևակ եղբայրներ>> ՍՊԸ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	ՀՀ Գեղարքունիքի մարզ,ք.Գավառ, Արծվաքար թաղ.
Կոնվերսբանկ ԲԲԸ	Յունիբանկ ԲԲԸ
Հ/Հ 1930059757870200	Հ/Հ 24134001708600
ՀՎՀՀ 02562459	ՀՎՀՀ 08415376
Տնօրեն՝ Լ.Մնացականյան	Տնօրեն՝ Խ.Սիմոնյան
---------- Կ.Տ	---------- Կ.Տ
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված թիվ 1
« 14 » Մարտի 2018թ. կնքված
ՓՄՀ-ՁԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/4 ծածկագրով պայմանագրի

ԾԱԿԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

/հազ.դրամ/

ՀՀ	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը	Ծրագիրը իրականացնող կազմակերպությունը
1	2	3	4	5	6	7
	1. Ջրատար					
1	Խրամուղու մշակում VI կարգի գրունտի հարվածահատ մուրջով	100մ³	0.528			Իրականացնում է համայնքը
2	Գրունտի բարձում ձեռքով ինքնաթափ	մ³	52.8			
3	Գրունտի տեղափոխում 2 կմ	տն	137.0			
4	Խրամուղու մշակում IV կարգի գրունտի էքսկավատորով կողալիցքով	1000մ³	0.0907			
5	Խրամուղու մշակում IV կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ³	0.101			
6	Խրամուղու մշակում III կարգի գրունտի էքսկավատորով կողալիցքով	1000մ³	0.0475			
7	Խրամուղու մշակում III կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ³	0.053			
8	Ավազային գրունտի քանլում էքսկավատորով բարձումով ինքնաթափ	1000մ³	0.0505			
9	Գրունտի տեղափոխում 2 կմ	տն	70.7			
10	Նախաշերտի իրականացում փափուկ գրունտից h=10սմ	մ³	9.3			
11	Պաշտպանիչ շերտի իրականացում փափուկ գրունտից	100մ³	0.294			
12	Խրամուղու ետլիցք 2կմ բերված գրունտով բուլդոզերով	1000մ³	0.0118			
13	Խրամուղու ետլիցք կողալիցքի գրունտով բուլդոզերով	1000մ³	0.1536			
14	Գրունտի տոփանում	100մ³	1.536			
15	Պողպատե(ST)էլ եռակցվող խողովակնետի ապամոնտաժում DN 159x4.5մմ	գմ	128.0			
16	DN150 խողովակների ուժեղացված հակակորոզիոն մեկուսացում	գմ	128.0			
1	Պողպատե(ST)էլ եռակցվող խողովակնետի մոնտաժում DN159x4.5մմ փորձարկումով (խողովակները տրամադրում է համայնքը)	գմ	128.0	1.006	128.781	Իրականացնում է Հայաստանի ՓՄՀ ՁԱԿ հիմնադրամը /ԱՄՆ ՍՀԶԳ-ի ծրագիր/
2	Ազդանշանային ժապավեն	գմ	128.0	0.126	16.098	
3	Պողպատե(ST)էլ եռակցվող խողովակնետի լվացում DN159x4.5մմ	գմ	128.0	0.138	17.707	

Դատարկման հոր (1 կառույց)						
1	Փոսորակի մշակում III կարգի գրունտի էքսկավատորով կողալիցքով	1000մ³	0.0025			Իրականացնում է համայնքը
2	Փոսորակի մշակում IV կարգի գրունտի էքսկավատորով կողալիցքով	1000մ³	0.0025			
3	Փոսորակի մշակում V կարգի գրունտի էքսկավատորով կողալիցքով	1000մ³	0.0013			
4	Խրամուղու մշակում V կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ³	0.003			
5	Նախաշերտի իրականացում կոպճից տոփանված գրունտում h=10սմ	մ³	0.2			
6	Փոսորակի ետլիցք մշակված գրունտեռից տոփանումով	100մ³	0.057			
7	Ավելացած գրունտի հարթեցում տեղում	100մ³	0.009			
1	Պողպատե(ST)էլ եռակցվող խողովակնետի մոնտաժում DN76x3.5մմ փորձարկումով	գմ	6.1	4.402	26.850	Իրականացնում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը /ԱՄՆ ՄՁԳ-ի ծրագիր/
2	DN76 խողովակների ուժեղացված հակակորոզիոն մեկուսացում	գմ	6.1	1.132	6.904	
3	Գնալային փական DN65 PN=1,0ՄՊա	հատ	1	38.609	38.609	
4	Ճկուն կցորդիչ DN 65 PN=1,0ՄՊա	հատ	1	16.978	16.978	
5	Պողպատե էլ եռակցվող կցաշուրթեր DN65 PN=1,0ՄՊա	հատ	2	4.779	9.558	
6	Պոլիմեր-ավազային կլոր հոր D=0,9մ H=1,8մ	մ³	0.28	40.118	11.233	
7	Պոլիմեր-ավազային հորի տակդիր	հատ	1	12.954	12.954	
8	Պոլիմեր-ավազային հորի օղակ	հատ	2	30.183	60.366	
9	Պոլիմեր-ավազային հորի մտոց կափարիչով	հատ	1	86.273	86.273	
10	Պողպատե հենարանների տեղադրում DN57x3,5մմ	տն	0.0014	633.217	0.887	
11	Մետաղական թիթեղ 200x200 4մմ	տն	0.0064	631.330	4.041	
12	Պողպատե անկյունակ DN 76մմ	տն	0.0034	2,306.996	7.844	
13	Պողպատե խողովակների միացում գործող գծին D 150մմ	տեղ	1	11.570	11.570	
Ջրագիծ						
1	Խրամուղու մշակում VI կարգի գրունտի հարվածահատ մուրջով	100մ³	0.461			Իրականացնում է համայնքը
2	Գրունտի բարձում ձեռքով ինքնաթափ	մ³	46.1			
3	Գրունտի տեղափոխում 2 կմ	տն	120.0			
4	Խրամուղու մշակում IV կարգի գրունտի էքսկավատորով կողալիցքով	1000մ³	0.0333			
5	Խրամուղու մշակում IV կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ³	0.059			
6	Խրամուղու մշակում III կարգի գրունտի էքսկավատորով կողալիցքով	1000մ³	0.0152			

7	Խրամուղու մշակում III կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ³	0.027			
8	Ավազային գրունտի քանլում էքսկավատորով բարձումով ինքնաթափ	1000մ³	0.0459			
9	Գրունտի տեղափոխում 2 կմ	տն	64.0			
10	Նախաշերտի իրականացում փափուկ գրունտից h=10սմ	մ³	4.6			
11	Պաշտպանիչ շերտի իրականացում փափուկ գրունտից	100մ³	0.109			
12	Խրամուղու ետլիցք 2կմ բերված գրունտով բուլդոզերով	1000մ³	0.0304			
13	Խրամուղու ետլիցք կողալիցքի գրունտով բուլդոզերով	1000մ³	0.0571			
14	Գրունտի տոփանում	100մ³	0.571			
1	Պողպատե (ST) էլեռակցվող խողովակնետի մոնտաժում DN76x3.5մմ փորձարկումով	գմ	64.0	4.402	281.709	Իրականացնում է Հայաստանի վառելիքաէներգետիկ ընկերության ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամի /ԱՄՆ ՄՁԳ-ի ծրագիր/
2	DN76x3.5մմ խողովակների ուժեղացված հակակորոզիոն մեկուսացում	գմ	64.0	1.132	57.600	
3	Ազդանշանային ժապավեն	գմ	64.0	0.138	7.040	
4	Պողպատե (ST) էլեռակցվող խողովակնետի լվացում DN76x3.5մմ	գմ	64.0	0.126	6.400	
Բաժանարար հոր ԲՀ-2 (1 կառույց)						
1	Փոսորակի մշակում III կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ³	0.032			Իրականացնում է դաշնությամբ
2	Փոսորակի մշակում IV կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ³	0.072			
3	Խրամուղու մշակում VI կարգի գրունտի հարվածահատ մուրջով	100մ³	0.121			
5	Փոսորակի ետլիցք մշակված գրունտեռից տոփանումով	100մ³	0.112			
6	Ավելացած գրունտի հարթեցում տեղում	100մ³	0.113			
1	Նախաշերտի իրականացում կոպճից տոփանված գրունտում h=10սմ	մ³	0.74	30.071	22.253	Իրականացնում է Հայաստանի վառելիքաէներգետիկ ընկերության ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամի /ԱՄՆ ՄՁԳ-ի ծրագիր/
2	Բետոնե հիմքի իրականացում B15	մ³	0.45	46.66	20.996	
3	Պատերի շարվածք ուղիղ կանոնավոր տուֆ քարից ցեմենտավազե շաղախով	մ³	2.1	24.78	52.028	
4	Ցեմենտավազե շաղախի շերտի իրականացում	մ³	0.041	42.26	1.733	
5	Պատերի ցեմենտավազե շաղախի սվաղ b-30մմ	մ²	9.0	2.01	18.110	
6	Ակոսավորված պողպատե ծածկի իրականացում	տն	0.1379	722.51	99.634	

7	Ակոսավորված պողպատե ծածկի և մտոցի հիդրոմեկուսացում	100մ^2	0.033	41.63	1.374	
8	Պողպատե հենարանների տեղադրում DN57x3,5մմ հիդրոմեկուսացումով	տն	0.0028	633.22	1.773	
9	Մետաղական թիթեղ 200x200x4մմ հիդրոմեկուսացումով	տն	0.0128	631.33	8.081	
10	Պողպատե(ST)էլ եռակցվող խողովակնետի մոնտաժում DN 219x4մմ հիդրոմեկուսացումով և փորձարկումով	գմ	1.4	16.35	22.889	
11	Պողպատե (ST) էլ եռակցվող խողովակնետի մոնտաժում DN76x3.5մմ փորձարկումով	գմ	1.4	4.40	6.162	
12	Պողպատե (ST) էլ եռակցվող խողովակնետի մոնտաժում DN 25x2.5մմ հիդրոմեկուսացումով և փորձարկումով	գմ	3.2	1.38	4.427	
13	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակնետի մոնտաժում de 32մմ փորձարկումով	գմ	22.4	0.63	14.085	
14	Պողպատե ցափակիչ DN 200 հիդրոմեկուսացումով	տն	0.0092	2,306.996	21.224	
15	Խցափակիչ պոլիէթիլենե de 32մմ	հատ	14	1.38	19.368	
16	Գնդային փական DN50 PN=1,0ՄՊա	հատ	1	21.63	21.631	
17	Ճկուն կցորդիչ DN 50 PN=1,0ՄՊա	հատ	1	8.80	8.803	
18	Գնդային փական DN25 PN=1,0ՄՊա	հատ	14	8.80	123.248	
19	Կոմպրեսիոն պարուրակային կցորդիչ DN32 PN=1,0ՄՊա	հատ	28	4.78	133.812	
20	Պողպատե էլ եռակցվող կցաշուրթեր DN 50 PN=1,0ՄՊա	հատ	1	3.52	3.521	
21	Պողպատե խողովակների հիդրոմեկուսացում	100մ^2	0.029	41.63	1.207	
22	Պողպատե անկյունակ DN 76մմ	տն	0.0034	2,306.996	7.844	
23	Պողպատե խողովակների միացում D 25մմ	տեղ	14	2.89	40.496	
24	Պողպատե մտոցի պատրաստում և տեղադրում հիդրոմեկուսացումով	տն	0.0564	722.51	40.749	
25	Աստիճանի պատրաստում և տեղադրում հիդրոմեկուսացումով	տն	0.023	748.42	17.214	
	2. 80 խմ ջրամբարի վերանորոգում					
1	Ծածկի վրայի մշակում III կարգի գրունտերում ձեռքով կողալիցքով	100մ^3	0.194			Իրականացնում է հանձնաժողով
2	Ջրամբարի ներսում հողի և քարերի մաքրում ձեռքով	100մ^3	0.0124			
3	Շինարական աղբի բարձում ձեռքով ինքնաթափ	մ^3	1.24			
4	Շինարական աղբի տեղափոխում 2 կմ	տն	2.4			

5	III կարգի գրունտեի մշակում խրամուղիներում էքսկավատորով կողալիցքով	1000մ³	0.0			
6	IV կարգի գրունտեի մշակում խրամուղիներում էքսկավոտորով կողալիցքով	1000մ³	0.0			
7	VI կարգի գրունտեի մշակում խրամուղիներում էքսկավոտորով կողալիցքով	1000մ³	0.0			
8	VI կարգի գրունտի մշակում խրամուղիներում հարվածահատ մուրջով կողալիցքով	100մ³	0.067			
9	Նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ փափոիկ գրունտից	մ³	4.7			
1	Ծածկի պանելների ապամոնտաժում	հատ	5	5.697	28.485	Իրականացնում է Հայաստանի ՓՄՁ ԶԼԿ հիմնադրամը /ԱՄՆ ՄԶԳ-ի ծրագիր/
2	Ձրամբարի ներսում պատերի և հատակի լվացում ջրով	տարողություն մ³	80.0	0.443	35.415	
3	Պատերի և հատակի վրա ֆ14մմ տրամագծով անցքերի գալիկոնում	100 հատ	3	503.052	1,307.935	
4	Պատերի և հատակի վրա ամրանային ցանցի ամրացումն 100x100 բացվացքով Вр -1	տն	0.2641	526.167	138.961	
5	Ցանցի ամրացում ցցաձողերով A 500C-12 և ցեմենտա-պոլիմերային մածուկով	տն	0.0422	512.685	21.635	
6	Պատերի տորկրետացում b-40մմ	մ²	63.6	6.452	410.324	
7	Հատակի բետոնացում B 20	մ³	1.7	52.091	88.555	
8	Ծածկի պանելների մոնտաժում	հատ	5	18.864	94.322	
9	Ծածկի պանելների մոնոլիտացում և եզրաբետոնացում բետոն B 20	մ³	0.75	49.299	36.974	
10	Մտոցի պատերի շարվածք ուղիղ կանոնավոր տուֆ քարից	մ³	0.35	24.775	8.671	
11	Ցեմենտավազե շաղախի իրականացում	մ³	0.2	42.256	8.451	
12	Պողպատե մտոցի պատրաստում և տեղադրում (հիդրոմեկուսացումով)	հատ	1	81.494	81.494	
13	Աստիճանի պատրաստում և տեղադրում (հիդրոմեկուսացումով)	տն	0.1	748.416	42.136	
14	Փականների ապամոնտաժում D-150	հատ	2	2.641	5.282	
Բաժանարար հոր (1 կառույց)						
1	Փոսորակի մշակում IV կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ³	0.164			Իրականացնում է հանդիսանալ
2	Փոսորակի մշակում V կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ³	0.03			

4	V կարգի գրունտի մշակում փոսորակում ձեռքով կողալիցքով	100մ³	0.006			
5	Փոսորակի ետլիցք մշակված գրունտեռից	100մ³	0.129			
6	Ավելացած գրունտի հարթեցում տեղում	100մ³	0.019			
1	Նախաշերտի իրականացում կոպճից տոփանված գրունտում h=10սմ	մ³	0.2	30.057	6.011	Իրականացնում է Հայաստանի ՓՄՁ ՁՈՒԿ հիմնադրամը /ԱՄՆ ՄՁԳ-ի ծրագիր/
2	Պողպատե (ST) էլեռակցվող խողովակնետի մոնտաժում DN159x4.5մմ փորձարկումով	գմ	1.1	9.558	8.360	
3	Սողնակային փական DN150 PN=1,0ՄՊա	հատ	1	94.700	75.300	
4	Կցաշուրթային Ճկուն ներդիր DN 150PN=1,0ՄՊա	հատ	1	87.783	69.800	
5	Պողպատե էլ եռակցվող կցաշուրթեր DN 150 PN=1,0ՄՊա	հատ	2	9.181	14.600	
6	Պոլիմեր-ավազային D=0,9մ H=1,8մ կլոր հոր	մ³	0.55	40.118	17.545	
7	Պոլիմեր-ավազային հորի տակդիր	հատ	1	12.954	10.300	
8	Պոլիմեր-ավազային հորի օղակ	հատ	4	30.183	96.000	
9	Պոլիմեր-ավազային հորի մտոց կափարիչով	հատ	1	86.273	68.600	
10	Պողպատե հենարանների տեղադրում DN57x3,5մմ (հիդրոմեկուսացումով)	տն	0.0014	633.217	0.705	
11	Մետաղական թիթեղ 200x200x4մմ (հիդրոմեկուսացումով)	տն	0.0064	631.330	3.213	
12	Աստիճանի պատրաստում և տեղադրում (հիդրոմեկուսացումով)	տն	0.0281	748.416	16.722	
	Դատարկման ջրագծի հոր (1 կառույց)					
1	III կարգի գրունտեի մշակում փոսորակում էքսկավոտորով կողալիցքով	1000մ³	0.0032			Իրականացնում է ընթացիկ
2	IV կարգի գրունտեի մշակում փոսորակում էքսկավոտորով կողալիցքով	1000մ³	0.007			
3	V կարգի գրունտեի մշակում փոսորակում էքսկավոտորով կողալիցքով	1000մ³	0.004			
4	V կարգի գրունտեի մշակում փոսորակում ձեռքով կողալիցքով	100մ³	0.006			
5	Փոսորակի ետլիցք մշակված գրունտեռից	100մ³	0.129			
6	Ավելացած գրունտի հարթեցում տեղում	100մ³	0.019			
1	Նախաշերտի իրականացում կոպճից տոփանված գրունտում h=10սմ	մ³	0.20	30.057	6.011	Իրականացնում է Հայաստանի ՓՄՁ ՁՈՒԿ հիմնադրամը /ԱՄՆ ՄՁԳ-ի ծրագիր/
2	Պողպատե(ST)էլ եռակցվող խողովակնետի մոնտաժում DN108x4մմ փորձարկումով	գմ	1.1	6.665	7.332	
3	Սողնակային փական DN100 PN=1,0ՄՊա	հատ	1	37.226	37.226	

4	Կցաշուրթային Ճկուն ներդիր DN100PN=1,0ՄՊա	հատ	1	58.731	58.731	
5	Պողպատե էլեռակցվող կցաշուրթեր DN 100 PN=1,0ՄՊա	հատ	2	0.490	0.981	
6	Պոլիմեր-ավազային կլոր հոր D=0,9մ H=1,8մ	մ^3	0.55	40.118	22.065	
7	Պոլիմեր-ավազային հորի տակդիր	հատ	1	12.954	12.954	
8	Պոլիմեր-ավազային հորի օղակ	հատ	4	30.183	120.732	
9	Պոլիմեր-ավազային հորի մտոց կափարիչով	հատ	1	86.273	86.273	
10	Պողպատե հենարանների տեղադրում DN57x3,5մմ հիդրոմեկուսացումով	տն	0.0014	633.217	0.887	
11	Մետաղական թիթեղ 200x200x4մմ (հիդրոմեկուսացումով)	տն	0.0064	631.330	4.041	
12	Աստիճանի պատրաստում և տեղադրում (հիդրոմեկուսացումով)	տն	0.0281	748.416	21.030	
Ջրամբարի խողովակներ						
1	III կարգի գրունտեի մշակում էքսկավոտորով և բարձում ինքնաթափ	1000մ^3	0.0895			Իրականացնում է համայնքը
2	Փափուկ գրունտի տեղափոխում 2 կմ	տն	170.0			
3	Ջրամբարի հողաթմբում գրունտի տեղափոխում մինչև 10մ	100մ^3	0.895			
4	Նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ փափուկ գրունտից	մ^3	4.7			
5	Պաշտպանիչ շերտի իրականացում փափուկ գրունտից	մ^3	14.1			
6	Ետլիցք մշակված փափուկ գրունտից	100մ^3	0.484			
7	Գրունտի տեղափոխում 10մ	տն	170.0			
8	Հողաթմբի տոփանում	100մ^3	0.895			
1	Պողպատե(ST)էլեռակցվող խողովակնետի մոնտաժում DN159x4մմ փորձարկումով (խողովակները տրամադրում է համայնքը)	գմ	67.6	9.558	646.120	Իրականացնում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը /ԱՄՏ ՍՁԳ-ի ծրագիր/
2	Պողպատե(ST)էլեռակցվող խողովակնետի մոնտաժում DN108x4մմ փորձարկումով	գմ	2.2	6.665	11.660	
3	Պողպատե (ST)էլեռակցվող խողովակնետի մոնտաժում DN40x3,5մմ փորձարկումով	գմ	10.8	2.515	21.600	
4	Պողպատե ձևավոր մասերի տեղադրում	տն	0.051	2306.996	93.554	
5	Պողպատե խողովակների միացում D 40մմ	տեղ	7	3.521	19.600	
6	Պողպատե խողովակների հիդրոմեկուսացում	100մ^2	0.32	41.628	10.592	
7	Ջրամբարի հիդրավլիկ փորձարկում	մ^3	80.0	0.443	28.160	
3. Հորեր						
Բաժանարար հորեր ԲՀ-1,ԲՀ-4 (2 կառույց)						

1	Փոսորակի մշակում III կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ³	0.054			Իրականացնում է համայնքը
2	Փոսորակի մշակում IV կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ³	0.102			
3	Փոսորակի մշակում VI կարգի գրունտի հարվածահատ մուրջով կողալիցքով	100մ³	0.108			
4	Փոսորակի ետլիցք մշակված գրունտեռից տոփանումով	100մ³	0.166			
5	Ավելացած գրունտի հարթեցում տեղում	100մ³	0.098			
1	Նախաշերտի իրականացում կոպճից տոփանված գրունտում h=10սմ	մ³	0.8	30.057	24.046	Իրականացնում է Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամը /ԱՄՆ ՄՁԳ-ի ծրագիր/
2	Բետոնե հիմքի իրականացում B15	մ³	0.8	46.658	37.326	
3	Պատերի շարվածք ուղիղ կանոնավոր տուֆ քարից ցեմենտավազե շաղախով	մ³	3.8	24.775	94.146	
4	Ցեմենտավազե շաղախ	մ³	0.07	42.256	2.958	
5	Պատերի ցեմենտավազե սվաղ b-30մմ	մ³	15.4	2.012	30.988	
6	Ակոսավորված պողպատե ծածկի իրականացում	տն	0.2392	722.508	172.824	
7	Ակոսավորված պողպատե ծածկի և մտոցի հիդրոմեկուսացում	100մ²	0.0572	41.628	2.381	
8	Պողպատե հենարանների տեղադրում DN57x3,5մմ հիդրոմեկուսացումով	տն	0.0056	633.217	3.546	
9	Մետաղական թիթեղ 200x200x4մմ հիդրոմեկուսացումով	տն	0.0256	631.330	16.162	
10	Պողպատե(ST)էլ եռակցվող խողովակնետի մոնտաժում DN 219x4մմ հիդրոմեկուսացումով և փորձարկումով	գմ	2.0	16.349	32.698	
11	Պողպատե (ST)էլ եռակցվող խողովակնետի մոնտաժում DN76x3.5մմ փորձարկումով	գմ	2.4	4.402	10.564	
12	Պողպատե (ST)էլ եռակցվող խողովակնետի մոնտաժում DN 25x2.5մմ փորձարկումով	գմ	4.0	1.383	5.534	
13	Պոլիէթիլենե (PE)էլ եռակցվող խողովակնետի մոնտաժում de 32մմ փորձարկումով	գմ	32.0	0.629	20.122	
14	Պողպատե խցափակիչ DN 200մմ	տն	0.0204	2,306.996	47.063	Իրականացնում է Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամը /ԱՄՆ ՄՁԳ-ի ծրագիր/
15	Պողպատե անկյունակ DN 76մմ	տն	0.0068	2,306.996	15.688	
16	Խցափակիչ պոլիէթիլենե de 32մմ	հատ	20	1.383	27.668	
17	Գնդային փական DN50 PN=1,0ՄՊա	հատ	2	21.631	43.262	
18	Ճկուն կցորդիչ DN 50 PN=1,0ՄՊա	հատ	2	8.803	17.607	
19	Գնդային փական DN25 PN=1,0ՄՊա	հատ	20	8.803	176.068	
20	Կոմպրեսսիոն պարուրակային կցորդիչ DN25 PN=1,0ՄՊա	հատ	40	4.402	176.068	
21	Պողպատե էլ եռակցվող կցաշուրթեր DN 50 PN=1,0ՄՊա	հատ	2	3.521	7.043	
22	Պողպատե խողովակների և մտոցի հիդրոմեկուսացում	100մ²	0.0	41.628	1.832	

23	Պողպատե անկյունակ DN 76մմ	տն	0.0	2,306.996	15.688	
24	Պողպատե խողովակների միացում D 25մմ	տեղ	20	2.893	57.851	
25	Պողպատե մտոցի պատրաստում և տեղադրում	տն	0.1128	722.508	81.499	
26	Աստիճանի պատրաստում և տեղադրում (հիդրոմեկուսացումով)	տն	0.046	748.416	34.427	
27	Պողպատե խողովակների միացում գործող գծին D 150մմ	տեղ	2	13.834	27.668	
Բաժանարար հոր ԲՀ-5 (1կառույց)						
1	Փոսորակի մշակում II կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ³	0.022			Իրականացնում է հանձնաժողով
2	Փոսորակի մշակում IV կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ³	0.041			
3	Փոսորակի մշակում VI կարգի գրունտի հարվածահատ մուրջով կողալիցքով	100մ³	0.131			
6	Փոսորակի ետլիցք մշակված գրունտեռից տոփանումով	100մ³	0.148			
7	Ավելացած գրունտի հարթեցում տեղում	100մ³	0.0			
1	Նախաշերտի իրականացում կոպճից տոփանված գրունտում h=10սմ	մ³	0.30	30.06	9.017	Իրականացնում է Հայաստանի Վերակառուցման ՓՄՁ ՑԱԿ հիմնադրամը /ակցիաների ծրագիր/
2	Բետոնե հիմքի իրականացում B15	մ³	0.31	46.66	14.464	
3	Պատերի շարվածք ուղիղ կանոնավոր տուֆ քարից	մ³	1.8	24.78	44.596	
4	Ցեմենտավազե շաղախ	մ³	0.034	42.26	1.437	
5	Պատերի ցեմենտավազե սվաղ b-30մմ	մ²	7.1	2.01	14.287	
6	Ակոսավորված պողպատե ծածկի իրականացում	տն	0.1012	722.51	73.118	
7	Ակոսավորված պողպատե ծածկի և մտոցի հիդրոմեկուսացում	100մ²	0.0242	41.63	1.007	Իրականացնում է Հայաստանի Վերակառուցման ՓՄՁ ՑԱԿ հիմնադրամը /ակցիաների ծրագիր/
8	Պողպատե հենարանների տեղադրում DN57x3,5մմ	տն	0.0028	633.22	1.773	
9	Մետաղական թիթեղ 200x200 4մմ	տն	0.0128	631.33	8.081	
10	Պողպատե(ST)էլեռակցվող խողովակնետի մոնտաժում DN 219x4մմ փորձարկումով	գմ	0.8	16.35	13.079	
11	Պողպատե(ST)էլեռակցվող խողովակնետի մոնտաժում DN76x3.5մմ փորձարկումով	գմ	1.2	4.40	5.282	
12	Պողպատե(ST)էլեռակցվող խողովակնետի մոնտաժում DN 25x2.5մմ փորձարկումով	գմ	1.6	1.38	2.213	
13	Պոլիէթիլենե (PE)էլեռակցվող խողովակնետի մոնտաժում de 32մմ փորձարկումով	գմ	12.8	0.63	8.049	
14	Պողպատե խցափակիչ DN 200մմ	տն	0.0102	2,306.996	23.531	

9	Մետաղական թիթեղ 200x200 4մմ	տն	0.0512	631.330	32.324	
10	Պողպատե(ST)էլեռակցվող խողովակնետի մոնտաժում DN 219x4մմ փորձարկումով	գմ	5.6	16.349	91.555	
11	Պողպատե(ST)էլեռակցվող խողովակնետի մոնտաժում DN76x3.5մմ փորձարկումով	գմ	5.6	4.402	24.650	
12	Պողպատե(ST)էլեռակցվող խողովակնետի մոնտաժում DN 25x2.5մմ փորձարկումով	գմ	11.2	1.383	15.494	
13	Պողպատե(ST)էլեռակցվող խողովակնետի մոնտաժում DN 32x2.5մմ փորձարկումով	գմ	89.6	0.629	56.342	
14	Պողպատե Խցափակիչ DN 200մմ և 32մմ	տն	0.0424	2,306.996	97.817	
15	Խցափակիչ պոլիէթիլենե de 32մմ	հատ	56	1.383	77.470	
16	Գնլային փական DN50 PN=1,0ՄՊա	հատ	4	21.631	86.525	
17	Ճկուն կցորդիչ DN 50 PN=1,0ՄՊա	հատ	4	8.803	35.214	
18	Գնդային փական DN25 PN=1,0ՄՊա	հատ	56	8.803	492.991	
19	Կոմպրեսսիոն պարուրակային կցորդիչ DN25 PN=1,0ՄՊա	հատ	112	4.779	535.247	
20	Պողպատե էլեռակցվող կցաշուրթեր DN 50 PN=1,0ՄՊա	հատ	4	3.521	14.085	
21	Պողպատե խողավակների հիդրոմեկուսացում	100մ^2	0.116	41.628	4.829	
22	Պողպատե անկյունակ DN 76մմ (հիդրոմեկուսացումով)	տն	0.0136	2,306.996	31.375	
23	Պողպատե խողովակների միացում D 76մմ	տեղ	4	5.659	22.637	
24	Պողպատե խողովակների միացում D 25մմ	տեղ	56	2.893	161.983	
25	Պողպատե մտոցի պատրաստում և տեղադրում (հիդրոմեկուսացումով)	տն	0.226	722.508	163.287	
26	Աստիճանի պատրաստում և տեղադրում (հիդրոմեկուսացումով)	տն	0.092	748.416	68.854	
27	Պողպատե խողովակների միացում գործող գծին D 150մմ	տեղ	4	13.834	55.336	
	ՋՀ-1, ՋՀ-2 հորեր (2 կառույց)					
1	Փոսորակի մշակում III կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ^3	0.016			Իրականացնում է բուսաբուծական կազմակերպությունը
2	Փոսորակի մշակում IV կարգի գրունտի ձեռքով կողալիցքով	100մ^3	0.034			
3	Փոսորակի մշակում VI կարգի գրունտի հարվածահատ մուրջով կողալիցքով	100մ^3	0.042			
4	Փոսորակի ետլիցք մշակված գրունտեռից տոփանումով	100մ^3	0.020			
5	Ավելացած գրունտի հարթեցում տեղում	100մ^3	0.030			
6	Փոսորակի ետլիցք մշակված գրունտեռից	100մ^3	0.027			
1	Առկա պողպատե խողովակնետի ապամոնտաժում DN76մմ	գմ	4.0	0.377	1.509	Իրականացնում է ՀՀ ԳՇԿ ՓՄՁ-ի վերակառուցման հիմնադրամը /ԱՄՆ ՄՁԳ-ի ծրագիր/
2	Խողովակների բարձում ձեռքով ինքնաթափ և տեղափոխում 2 կմ	տն	0.0226	1.610	0.036	

Հավելված թիվ 2
« 14 » Մարտի 2018թ. կնքված
ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/4 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Արագածոտնի մարզի Ավան գյուղական համայնքի ֆերմերային տնտեսությունների զարգացման նպատակով գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցի վերակառուցման աշխատանքներ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Ձրատար	Պայմանագրի կնքման օր	Պայմանագրի կնքման օրվանից 70 օրացուցային օրվա ընթացքում
2	Դատարկման հոր (1 կառույց)		
3	Ձրագիծ		
4	Բաժանարար հոր ԲՀ-2 (1 կառույց)		
5	80 խմ ջրամբարի վերանորոգում		
6	Բաժանարար հոր (1 կառույց)		
7	Հեռացնող ջրագծի հոր (1 կառույց)		
8	Դատարկման ջրագծի հոր (1 կառույց)		
9	Ձրամբարի խողովակներ		
10	Բաժանարար հորեր ԲՀ-1,ԲՀ-4 (2 կառույց)		
11	Բաժանարար հոր ԲՀ-5 (1կառույց)		
12	Բաժանարար հոր ԲՀ-3, ԲՀ-6, ԲՀ-7, ԲՀ-8, (4 կառույց)		
13	ՁՀ-1, ՁՀ-2 հորեր (2 կառույց)		
ԸՆԴԱՄԵՆԸ		**Պայմանագրի կնքման օր**	**Պայմանագրի կնքման օրվանից 70 օրացուցայի օրվա ընթացքում**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 1930059757870200
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն՝ Լ.Մնացականյան

---------- Կ.Տ
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Սաշիկ և Սևակ եղբայրներ>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ,ք.Գավառ, Արծվաքար թաղ.
Յունիբանկ ԲԲԸ
Հ/Հ 24134001708600
ՀՎՀՀ 08415376
Տնօրեն՝ Խ.Սիմոնյան

---------- Կ.Տ
/ստորագրություն/

Հավելված N 3
« 14 » Մարտի 2018թ. կնքված
ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45451700	ՀՀ Արագածոտնի մարզի Ավան գյուղական համայնքի ֆերմերային տնտեսությունների զարգացման նպատակով գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցի վերակառուցման աշխատանքներ	-	-	-	3,685,000	7,370,000	7,370,000	7,370,000	7,370,000	7,370,000	7,370,000	7,370,000	7,370,000	7,370,000

*** Գումարները լրացված են ամբողջական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 1930059757870200
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն՝ Լ.Մնացականյան

---------- Կ.Տ
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Սաշիկ և Սևակ եղբայրներ>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ,ք.Գավառ,
Արծվաքար թաղ.
Յունիբանկ ԲԲԸ
Հ/Հ 24134001708600
ՀՎՀՀ 08415376
Տնօրեն՝ Խ.Սիմոնյան

---------- Կ.Տ
/ստորագրություն/

Հավելված թիվ 4
« 14 » Մարտի 2018թ. կնքված
ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/4 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
<<Սաշիկ և Սևակ եղբայրներ>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ,ք.Գավառ, Արծվաքար թաղ.
Յունիբանկ ԲԲԸ
Հ/Հ 24134001708600
ՀՎՀՀ 08415376

Պատվիրատու
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 1930059757870200
ՀՎՀՀ 02562459

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ԶԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2018 թ.
Պայմանագրի համարը՝ *ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/4*
Պատվիրատուն՝ ի դեմս «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի ԱՄՆ ՄԶԳ ծրագրի ենթակառուցվածքային ծրագրերի համակարգող Վ.Եսայանի և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս <<Սաշիկ և Սևակ եղբայրներ>> ՍՊԸ-ի տնօրեն Խ.Սիմոնյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2018թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝
Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 4.1
« 14 » Մարտի 2018թ. կնքված
ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/4 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Սաշիկ և Սևակ եղբայրներ>> ՍՊԸ –ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2018 թ. _____ -ին կնքված N *ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/4* գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 2018թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն